ԿԵՆԴԱՆԱԲԱՆ

ԱԲՐԱՀԱՄ ՔԱՀԱՆԱՅ Կ. ՊՈԼՍԵՑԻ

(Շար. տես յէջ 1)

Բ

ԱԲՐԱՀԱՄՈՒ յիշած և ստորագրած չորքոտանեաց ոմանց այլ միայն մորթոց անուանքն են. յետ Առիւծու բ. Պէպըր, Թ(ուրքարէն), որոյ ոչ հայերէն և ոչ միւս չորս լեզուօք անուանքը գիտէ, և է փռանկերէն Léopard կոչուածն, և ի մերոցս՝ Ընձառիւծ:

գ. Ինձ. Թ. Քափլան.
դ. Արջ.
ե. Թ. փառս (Յովազ—առիւծ ?)
զ. Գայլ.
է. Ա(րաբ) Զուրափէ (Ընձուղտ).
ը. Շուն.
թ. Թ. Ջաքալ (Շնագայլ).
ժ. Արաբացի գայլ. Թ. Սրթլան.
ժա. Աղուէս.
ժբ. Թ. Գարագուլագ (Լուսանն, Lynx).
ժգ. Կապիկ.
ժդ. Ձի.
ժե. Ջորի.
ժզ. Էշ.
ժէ. Ուղտ.
ժը. Եզ.
ժթ. Գոմէշ.
ի. Ոչխար.
իա. Այծ.
իբ. Եղնիկ.
իգ. Վայրի այծ.
իդ. Թ. Աղաճ կէլինճիկի.
իե. Լապըստակ (Նապաստակ).
իզ. Խոզ.
իէ. Կատու.
իը. Մուկն.
իթ. Փիղ.
լ. Եղն (տեսակք).
լա. Ոչխար (տեսակք).
լբ. Խլուրդ.
լգ. Մուկն (տեսակք).
լդ. Սամոյր.
լե. Թ. Ճըլղավայ (մորթ աղուէսու).
լզ. Թ. Վաշագ (Քաւթան).
լէ. Թ. Ջէրանէվա (Կզնաքիս).
լը. Կուղն.
լթ. Կոճէն (ի Մոսքովու գայ).
խ. Դէլին (ի Լեհաց գայ).
խա. Քաքումն (Մկնաքիս).
խբ. Լապըստակի մուշտակն.
խգ. Ոչխարի մուշտակ.
խդ. Կատուի մորթ.
խե. Գայլու մորթ.
խզ. Ջաքալի մորթ.
խէ. Այծու, Գառին մորթ.
խը. Ոզնի.
խթ. Աքիս.
ծ. Մինղջերու:

Ինչպէս հասարակաց զգացումն է վախ-
նալ ի գազանաց, սիրել ըզնտանի անասունս,
հիանալ և սխրանալ ձիու վրայ, սկսեալ ի
հին համբերող (Յոբ) նահապետէն կամ իր
գրող հեղինակէն, միտքը յափշտակելով և Ա-
տուծոյ պարծանք մի համարելով զձին, որոյ
ստորագրութեան առեն Պիւֆոն այլ գերա-
զանցէ ինքն քան զինքն, մեր բարի տիրուկ
կենդանաբանն այլ՝ թէ ոչ բարձրութեամբ
գրչին՝ այլ լայնութեամբ՝ ստորագրէ զՁին,
և միայն այսոր համար երկար յառաջաբան
մի գրէ, Աստուծոյ մարդկան համար ստեղծելն
ամեն ինչ, բայց մարդոյ ապերախտանալն
հպարտութեամբ, և այլն. սկսանելով, «Ա-
« տուած՝ զՁին վասն մարդոյն համար
« ստեղծ, յորժամ որ երկար ճանապարհ
« երթայ՝ հեծնի և չի խոնճայ. հանգստու-
« թեամբ վարէ զկանոն իւր»: Յետ յիշեալ
երկար բարոյականին՝ կու դառնայ առ Ձին.
« Արդ, ձիոյ բնութիւն թէպէտ չորք տարե-
« րացն է, ապա Աստուած՝ զքամին՝ առա-
« ւել ստեղծ ձիոյն քան զմարդոյն. զի ձին
« երագընթաց է քան զամենայն անասուն.
« և յորժամ վազէ՝ որպէս քամի երթայ: